# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԲՄԾՁԲ-26/9 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով ներքին աուդիտի ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.06.2026թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողովի կազմը՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Անի Թադևոսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Արա Հակոբյան /գնահատող/
Արտակ Հարությունյան /գնահատող/
Գագիկ Սարգսյան /բացող/
Ռազմիկ Օհանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 **ՀՀԿԳՄՍՆԲՄԾՁԲ-26/9** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԲՄԾՁԲ-26/9** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Քրոու Արմենիա» ՍՊԸ | procurement@crowe.am |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | |
|---|---|---|---|
| | | «Քրոու Արմենիա» ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 93432000 | 150000000 | 180000000* |

*** Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**5. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

5.1 **«Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի** հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

1) հայտում բացակայում է հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ,
2) առաջարկված գինը գերազանցում է նախահաշվային գինը,
3) Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**6. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

6.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 5-րդ մասը՝ **« Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի** հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**7. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.**

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

7.2 Հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

________________ Անի Թադևոսյան /նախագահ/

________________ Արա Հակոբյան

________________ Արտակ Հարությունյան

________________ Գագիկ Սարգսյան

________________ Ռազմիկ Օհանյան

________________ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/